

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

1985 - 1986

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրաէրեան,

Բարեխնամ Պատրիարք

Առաքելական Ս. Աթոռոյ

Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրեր

և յարգելի ներկաներ,

Շնորհիւ Ամենակալին Աստուծոյ, անգամ մը ևս կը կանգնինք մեր դպրոցական Ամավերջի հանդիսութեանց այս բեմին, կատարելու համար Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի 1985-86 դպրոցական տարեշրջանի ուսումնական, բարոյական և տնտեսական տեղեկատուութիւնը: Խոր գոհունակութեամբ կ'ընենք այս տեղեկատուութիւնը, որովհետեւ անիկա խաղաղ, արդիւնաւոր կրթական աշխատանքի մը յայտարարն է, որ կը ներկայանայ հետեւեալ մանրամասնութիւններով. —

Մեր առակերտութեան ընդհանուր թիւն էր այս տարի 160, բաժնուած հետեւեալ ձևով. —

	Մանչ	Աղջիկ	Գումար
Երկրգ. կարգեր	19	21	40
Նախակրթարան	30	35	65
Մանկապարտէզ	35	20	55
Համագումար	84	76	160

Երեքէն մինչև 17 տարեկան Երուսաղէմահայ գաղութի մեր նորահաս այս սերունդի վարք ու բարքը չունի նկարագրի և կարգապահութեան խոտոր գիծեր: Մեր վարժարանէն ներս հետեւաբար չունինք և հունեցանք այս տարի ևս կարգապահական դժուարութիւններ, ինչ որ մեզի համար զնահատանքի և գոհունակութեան տուեալ մըն է:

Այս տարի ունեցանք 24 հոգիներ ուսուցչական կազմ մը, որ բոլորով սրտիւ

օժանդակեց ու գործակցեցաւ մեզի մեր աշակերտութեան իմացական և բարոյական դաստիարակութեան սուրբ գործին մէջ: Շնորհակալութիւն իրենց: Մեր ուսուցչական կազմէն երեքը եկեղեցականներ են, մնացեալը աշխարհականներ — 14 Հայ և 7 օտարներ, մեծամասնութեամբ համայնաբանականներ: Օտարները Երուսաղէմի օտար դպրոցներու ամենէն ձեռնհաս ուսուցիչներն են, որոնք հաւաստապէս կը պաշտօնավարեն թէ՛ մեր և թէ՛ օտար դպրոցներէ ներս: Մեր ուսուցիչներէն Հայերէնի ուսուցիչ Պր. Պետրոս Լէփէճեան պաշտօնավարած է իբրեւ Ուսուցչապետ, իսկ Անգլերէնի ուսուցիչ Պր. Եղիա Տիգրանեան իբրեւ փոխ-Տեսուչ:

Մեր կրթական ծրագիրը ընթացաւ ըստ նախընթացի: Այսինքն մեր Նախակրթարանէն և Երկրորդական կարգերէն ներս ուսուցուցան չորս լեզուներ՝ Հայերէն (Գրաբար և Աշխարհաբար), Անգլերէն (լեզու և գրականութիւն), Եբրայերէն և Արաբերէն: Նախակրթարանի բաժնին մէջ Հայերէնն էր ուսուցման լեզուն գիտութիւններու, պատմութեան և կրօնի դասաւանդութիւններուն, իսկ Երկրորդական կարգերուն մէջ գիտական դասերը աւանդուեցան Անգլերէնով (Գիտութիւն, Տարրալուծութիւն, Կենսաբանութիւն, Բնալուծութիւն, Ընդհանուր Պատմութիւն, Թուաբանութիւն, Գրահաշիւ և Երկրաչափութիւն): Իսկ Հայագիտական դասեր՝ Հայերէնով (Ազգային Պատմութիւն, Կրօն, Մատենագրութիւն, Հայ Արուեստից Պատմութիւն):

Մեր Երկրորդական կարգերու ուսուցման ծրագիրը ոչ հայկական ճիւղերուն համար եղաւ Անգլիական General Certificate of Education (G. C. E.)-ի ծրագիրը,

սրովհետեւ մեր աշակերտները մեր վարժարանը աւարտելէ յետոյ կը մասնակցին Անգլիական G. C. E. թննութեանց, որուն կեդրոնը Լոնտոն է:

Ինչպէս կը հետեցնէք մեր սոյն կրթական ծրագրէն, մեր նպատակն է միշտ եւ եղաւ մեր աշակերտները պատրաստել որպէս գիտակից լաւ հայեր եւ ապա պատրաստել զանոնք այնպէս՝ որ անոնք կարենան դիւրութեամբ յարմարիլ նաեւ մեզ չըջապատող կեանքի օտար պայմաններուն:

Դպրոցական տարուկէսին (Յունուար 2-10) եւ աւարտին (Մայիս 20-31) ունեցանք նաեւ մեր կիսամետոյ եւ ամբողջի քննութիւնները, որմէ յետոյ մեր աւարտականն է. դասարանի հետեւալ 4 շնորհալի, ուշիմ եւ ընտիր աշակերտները արժանացան մեր աւարտական վկայականին:

Հրաչ Տէմիրճեան
Ուիլիամ Ղազեան
Կարինէ Գաբրիւնեան
Փերուզ Տիքպիքեան

Սոյն աշակերտները մասնակցեցան նաեւ Անգլիական G. C. E. թննութեանց, որոնց արդիւնքը կը ստանանք 1986 Սեպտեմբերին: Չորսն ալ պիտի շարունակեն իրենց համալսարանական ընթացքը:

Իսկ մեր Մանկապարտէզէն 10 փոքրիկներ Մանկապարտէզի վկայականին արժանանալով անցան Նախակրթարանի բաժին: Իրենց աւարտական հանգէսը տեղի ունեցաւ 1 Յունիս 1986, Կիրակի կէսօրէ ետք:

Բացառիկ յաջողութիւն մը եղաւ մեր Երկրորդական վարժարանի Ամալիքի Հանգէսը, որ նուիրուած էր Կոմիտաս Վարդապետի մահուան 50ամեակին, ուր մեր աշակերտները խմբերգներով, արտասանութիւններով ու բանաստեղծութիւններով ներկայացուցին մեծ վարդապետին կեանքն ու գործը — Հայ Երաժշտութեան արուեստին բերած իր անգնահատելի ծառայութիւնը:

Մեր անցեալ տարւոյ չըջանաւարտներէն չորսը, որոնք մասնակցեցան G. C. E. թննութեանց, յաջողեցան հետեւալ նիւթերուն մէջ. —

Նայիրի Տէր Վարդանեան՝ Հայերէն, Անգլերէն, Արաբերէն լեզուներ, Անգլ.

Դրականութիւն, Մաթեմատիք, Քիմիա-բանութիւն:

Սուգաննա Ճոնադեան՝ Հայերէն եւ Անգլերէն լեզուներ, Անգլ. Դրականութիւն, Մաթեմատիք եւ Քիմիաբանութիւն:

Մեզի համար քացառիկ յաջողութիւն մը եւ նոյն տառն խոր հրճուանք մը եղաւ պարագան Յակոբ Տիգրանեանի, որ տասնիւթերու մէջ յաջողեցաւ, այնպէս ձեռք ձգելով արդիւնք մը, որ քաղաքիս Հայ թէ օտար ամբողջ ուսանողութեան բարձրագոյն նուաճումը եղաւ: Իր յաջողած նիւթերն են. — Հայերէն, Անգլերէն, Արաբերէն լեզուներ, Անգլ. Դրականութիւն, Ընդհ. Ազգաց Պատմութիւն, Կենսաբանութիւն, Մաթեմատիք, Բարձրագոյն Մաթեմատիք (Additional Maths), Քիմիաբանութիւն, Բնագիտութիւն:

Կարինէ Պետրոսեան յաջողեցաւ Հայերէնի մէջ (Advanced Level), Դրաբար եւ Աշխարհաբար: Դժբախտաբար ան չկրցաւ շարունակել իր մնացեալ քննութիւնները, որովհետեւ անակնկալօրէն հիւանդացաւ այդ շրջանին:

Դարձեալ մեր այս տարուան 4 չըջանաւարտները՝ Փերուզ, Կարինէ, Հրաչ եւ Ուիլիամ, արդէն իսկ անցեալ տարի մասնակցեցան Արաբերէն լեզուի քննութեանց եւ չորսն ալ յաջողեցան:

Անցեալ տարւոյ մեր չըջանաւարտները կը կատարեն իրենց համալսարանական բարձրագոյն ուսումնառութիւնը այնպէս. — Յակոբ Տիգրանեան կ'աշակերտի Պոսթընի North Eastern համալսարանին, Յովհաննէս Սէմէրճեան՝ Երեսնի Պետական Համալսարանին, Նայիրի Տէր Վարդանեան՝ տեղւոյ Պիր Զէյթ համալսարանին, իսկ Կարինէ Պետրոսեան կը հետեւի Մանկավարժութեան (Montessori system):

Զանազան համալսարաններու մէջ ուսանող մեր հետեւալ 22 աշակերտներէն այս տարի իրենց համալսարանական ընթացքը աւարտած են՝ Հայաստանէն՝ Թարութիւն Պէքտեան, Սեդա Մազմանեան, Անուշ Նազգաշեան:

Երուսաղէմէն՝ Նորա Պետրոսեան:

Ամերիկայէն՝ Անի Տիգրանեան, Գէորգ Եարութիւնեան, Վիվիան Գէորգեան:

Անգլիայէն՝ Ալին Տէր Վարդանեան:

Մնացեալ 14 աշակերտները (տեսնել մեր

անցնել տարուան տեղեկագիրը) կը շարունակեն իրենց համալսարանական ընթացքը:

Ուրախութիւնը ունինք որ մեր բոլոր շրջանաւարտ և համալսարանաւարտ աշակերտները իրենց ուսումնական շրջանէն յետոյ զրաւած են առաջաւոր դիրքեր կեանքի զանազան ասպարէզներու մէջ, թէ՛ Երեսօղէմ և թէ՛ արտասահման, նոյն ատեն ի յայտ բերելով անձնաւորութեան և նկարագրի հայեցի և ընտիր կողմեր: Այս տեսակէտէն հաճելի յիշատակութիւն մըն է այն, որ տեղւոյս Պիր Զէյթ Լոմալսարանի վեց Լոյս ուսուցիչներէն չորսը Թարգմանչաց Վարժարանի աշակերտներ են:

Մեր աշակերտներու ընդհանուր դաստիարակութեան իրրեւմաս, հոգ տարինք նաև անոնց կրօնական դաստիարակութեան, կրօնքի և Լոյս եկեղեցագիտութեան պահերով, տօնական օրերուն զանոնք առաջնորդելով Սուրբ Եկեղեցի և մասնակից դարձնելով մեր արարողութիւններուն, իսկ Միսուրիի և Զատիկի անոնք մասնակից դարձան նաև Սուրբ Լազարու թանկանքի խորհուրդին:

Հոգ տարինք նաև անոնց մարզական-ֆիզիք դաստիարակութեան:

Վերահսկողութեամբ Օր. Ռօպէրթաւ Ըրվինի, ունեցանք նաև աղջիկներու մարզական դաստիարակութեան և ձեռագործային աշխատանքի պահեր: Զեռագործային աշխատանքներուն այս տարի մասնակցեցան նաև մասնաշաղկերտներ: Երկուստեք յիշատակելի պարագայ մըն է որ մեր ձեռագործները այս տարի կըրկնապատկուած էին թէ՛ քանակով և թէ՛ որակով, արժանանալով բոլորի գնահատանքին: Դարձեալ Օրիորդին ջանքերով, ձեռագործային աշխատանքներու կերպասեղէններու ծախքը գրեթէ իր նուազագոյնին իջաւ, շնորհիւ կարգ մը նուիրատուներու, որոնցմէ յատկապէս յիշատակելի է Ամերիկայի Little Rock քաղաքէն Տիկին Ռիթա Փլամբըրը: Շնորհակալութիւն ազնիւ Տիկին:

Մեր աշակերտներու սոյն ձեռագործային աշխատանքները վաճառքի դրուեցան Վարժարանի տարեկան Պաշտօնին, որ տեղի ունեցաւ 17 և 18 Մայիս, Շաբաթ և

Կիրակի օրերուն: Պաշարը ունեցաւ նաև երգի, պոռի, կերպարամի ու զուարթ ժամանցներու իր բաժինը: Պաշարը ապահովեց Վարժարանիս 8,350,000 իսր. Ծէքէլի եկամուտ մը: Այս առթիւ ունինք շնորհակալութեան խօսք այն բոլոր ազնիւ Տիկիններուն և ծնողներուն, որոնք սրտագին աշխատանք ու գործակցութիւն բերին Պաշարի առիթով:

Այս առթիւ կ'արժէ յիշատակել նաև Վարժարանիս Ս. Միսուրիի և Ամանորի խրախճանքը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 29 Դեկտեմբեր 1985 ին և Վարժարանիս ապահովեց 1,480,000 իսր. Ծէքէլի եկամուտ մը: Այս առթիւ կաղանդ Պապան Նոր Տարւոյ նուէրներ ալ բաժնեց մեր փոքրիկներուն, որոնց մէկ մասը հոգացուած էր նուիրատուութեամբ Օր. Արաքսի Թաճեանի (Էվէրէթէն): Իսկ Մանկապարտէզի փոքրիկներ կատարեցին երգեր, արտասանութիւններ ու պարեր:

Նոր Տարւոյ և Ս. Միսուրիի առիթով, երկրորդական բաժնի աշակերտներ երաժշտական թատերախաղ մը ներկայացուցին՝ "The Toys' Christmas" անունով, վերցուած "Nutcracker Suite" երաժշտական կտորէն: Տեսարաններ և տարազներ չինուած էին դերասան աշակերտներէն, ղեկավարութեամբ Օր. Ռօպէրթայի:

10 աշակերտական - խմբային պատշաճներ և պատմական ու թանգարանային հաստատութեանց այցելութիւններ տեղի ունեցան, առաջնորդութեամբ ուսուցիչներ Օր. Ռօպէրթաւ Ըրվինի և Պր. Միսաք Յակոբեանի:

Այստեղ շնորհակալութեամբ պէտք է յիշատակենք Ամերիկայէն Owens եղբայրները (owners of Jack & Jill Children's Clothing Stores, Arkansas), որոնց բարեացակամ ձեռնտուութեան շնորհիւ բացառիկ զեղչով մենք կըցանք այս տարի փոխանակել մեր աշակերտութեան հին համազգեստները շատ գեղեցիկ նոր համազգեստներով: Սոյն եղբայրներուն հետ մենք կ'ապուեցանք միջնորդութեամբ Օր. Ռօպէրթայի:

Ասկէ անդին կը ներկայացնենք մեր Վարժարանի ելեմտական հաշուեցուցակը որ հետեւելին է. —

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԵԼԵԻՄՏԻՑ Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1985 Յունիս 1 — 1986 Յունիս 30

Մ Ո Ւ Ց Ք

ԻՍՐ. ԵԼԻԷԼ

Պատրաստ ի դրամարկդ նախորդ դպրոցական տարեշրջանին փոխ.	4,340,079
Նուիրատուութիւններէ	135,759,119
Աշակերտական տարեթուականներէ	22,475,700
Հանդէսներէ և հասութարեր ձեռնարկներէ	
(Տարեկան Պաշարներ, պատի Օրացոյցներ, ներկայացումներ, Մանկապարտէզի Հանդէս)	10,940,000
Դասագրքերէ և դասատետերերէ	1,560,000
Բացառիկ մուտքերէ (վերաքննութեանց տուրքեր, համազգեստներ, ուշ վաճառուած չեֆերէ, Տուարի և Իսրայէլեանի տարբերութեան և այլ հասութարեր ձեռնարկներէ)	23,455,000
Արտաշէս և Սօնիա Սարեաններէ նուիրատուութիւն ի նպաստ Ս. Թարգմանչաց Վարժարանի Արշալոյս Զրուանդեան և Կոպեանիկ Սէֆէրեան անշարժ Հիմնադրամի (\$ 6,000)	9,000,000
	<u>207,529,898</u>

Ե Լ Ք

Ամսականք պաշտօնէութեան	166,701,800
Դասագիրքեր, դասատետեր և համայնագիրտարաններ	1,090,000
Գրեանական պիտոյք, կաւիճ, ֆոթօքօփի, քննութեանց հարցումներու պատրաստութիւն, սրբիչներ, նամակի թուղթ և պահարան, և այլ մանր ծախքեր	681,360
Թղթատարական ծախքեր	970,000
Ձեռագործի նիւթեղէն	336,000
Մաքրութեան և այլ մանր ծախքեր	
(աղբահաւաքի, մաքրութեան գործիքներ և լին.)	195,500
Տպագրական ծախքեր (պատի Օրացոյց, Տեղեկագիր, տոմսեր, յայտագրեր և լին.)	700,600
Շինուածականք և կահոյից նորոգութիւնք	277,450
Նուագի դաշնակ մը	1,450,000
Բացառիկ ծախքեր և պատուասիրութիւնք	866,200
Համազգեստներու գնման	2,688,000
Տարրալուծարանի գործիքներ	482,000
Մանկավարժական խաղալիքներ	51,000
Արտաշէս և Սօնիա Սարեաններէ նուիրատուութիւն ի պահ դրուած որպէս Ս. Թ. Վ. ի անշարժ Հիմնադրամ	9,000,000
	<u>185,489,910</u>

Պատրաստ ի դրամարկդ, որով կը վճարուին ամսական
արձակուրդի ամսականներու մէկ մասը:

22,039,988

207,529,898

Այս հաշուետուութեան առթիւ, հետեւել կէտերը կը յանձնենք ընթերցողներու մասնաւոր ուշադրութեան. —

ա) Դպրացական տարւոյն սկիզբը մէկ Տօլարը համարժէք էր 1200 Շէքէլի, տարւոյն վերջաւորութեան, աստիճանական արժէքադրկումով, մէկ Տօլարը համար. ժէք եղաւ 1500 Շէքէլի: Պանքին մէջ՝ 1440 Շէքէլ:

բ) Մեր մեծագումար նուիրատուներուն նուիրատուութիւնները նշանակած ենք նաեւ Տօլարով՝ շնորհակալութեանց բաժնին մէջ:

Իսկ այս տարւոյ վերջաւորութեան, Ս. Թարգմանչաց Երկրորդ. Վարժարանի Հիմնադրամը տոկոսներու յաւելումով և նոր նուիրատուութիւններով կը ներկայա. ցնէ հետեւել պատկերը. —

Տիար Վարդգէս Երէցեանէ հաստատուած «Էլվիր Երէցեան Հիմնադրամ»	43,333 \$
Տիար Եղուարդ Սէֆէրեանէ և Տիկին Ատրինէ Վարդպարոնեանէ նուիրուած Հիմնադրամ, ի յիշատակ Տիկին Քէթրին Սէֆէրեանի և Տիար Գէորգ (Երէց) Վարդպարոնեանի	23,709 \$
Տէր և Տիկին Արաաշէս և Սօնիա Սարեաններէ նուիրուած հիմնադրամ, ի յիշատակ իրենց մօր՝ Տիկին Արշալոյս Զրուանդեանի և Տիար Կոպեանիկ Սէֆէրեանի (1986ի նուիրատուութիւնը ներառեալ \$ 6000)	26,478 \$
Համագումար	93,520 \$

— Ինչպէս կը հետեցուի մեր հաշուետու. ւութենէն, մեր դպրացական մուտքի բա. ցարձակ մեծամասնութիւնը գոյացած է նուիրատուութիւններէ, որոնք կատար. ուած են արտասահմանէն, մեր վարժա. րանական — կրթական միսիոնի բարեկամ. ներէն: Ուսումնասէր ու հայասէր անձ. նաւորութիւններ, Շատ տկնայաւ է, որ առանց անոնց բարոյական և նիւթական գործակցութեան, մեր կրթական ճիգերը պիտի մնային թերի: Ահա թէ ինչու մեր բոլոր սաներով միասին կը մնան խորա. պէս երախտապարտ անոնց, իրրեւ մեր անգնահատելի գործակիցներուն, սուրբ և նուիրական այս գործին մէջ: Կ'ազօ. թենք մեր աշակերտներով միասին այգ. ողնիւ և ուսումնասէր նուիրատուներուն արեւշատութեան և երջանկութեան համար: Թող աստուածային շնորհները առատանան իրենց վրայ, իրրեւ գերազանց վարձա. տրութիւն իրենց բարի սրտերուն:

Ա մ ե Ր Ի կ ա յ է ն

	Ե Է Ք Ե Լ
Երուսաղէմի Պատրիարքութեան Բա. րեկամներու ընկերակցութիւն	15,095,000
Տէր և Տի. Ալեքս և Մարի Մանուկեան	7,500,000
Ալեքս Մանուկեան (չէֆերու ուշ վաճառումէն)	625,000
Հաուրրա Գարակէօզեան Հիմնարկթ.	7,500,000
Եղուարդ և Սթօրմի Փանոսեան	3,750,000

Տէր և Տիկին Զարեհ Պաուկեան	3,512,000
Զարեհ Պաուկեան (չէֆերու ուշ վաճառումէն)	312,000
Ռիչրա Կրէկօրի	3,325,000
Տէր և Տիկին Սուրէն Ֆէսճեան	3,000,000
Եղուարդ և Էլէն Մարտիկեան	1,520,000
Տէր և Տիկին Ճօն Կապրիէլ	1,500,000
Գրիգոր և Յասմիկ Ծատուրեան	1,500,000
Լ. Բ. Ը. Մ. — Թորոսեան Հիմնրկ.	1,500,000
Ռիչրա և Կլօրիա Մահտեսեան	1,500,000
Գրիգոր և Սօնա Ասատրեան	1,500,000
Տքթ. Էմմա և Մարգրիտ Կօրէք	1,200,000
Ռօնալտ և Փաթրիշիա Արահամեան	750,000
Տիգրան Մըսրիլեան	750,000
Օր. Քարէն Տէտերեան	749,000
Անի և Նոյեմի Գերպերեան քոյրեր	625,000
Օքլէնտի Տիկնանց Միութիւն	545,000
Մայք և Էլիզա Փարթայեան	450,000
Ռօպերթ Ուօլըր	375,000
Էլէրի Էսթըր (Ասատուր Առաքելեան)	375,000
Օր. Արաքսի Թաշճեան	367,000
Տէր և Տիկին Ուօլթըր Գարապեան	300,000
Էրմինէ և Հայկ Գաղապեան	300,000
Էտուրըս և Լիւնա Վ. Գաղապեան	300,000
Սարգիս և Միլինէ Գալֆայեան	300,000
Գրուգեան ընտանիք և Տիկին	
Լուսի Մօլինարի	300,000
Հայ Կին Ակումբ, Պոսթրն	300,000
Փիթըր Սարմանեան	300,000
Տիկին Անուշ Բաբելեան	300,000
Տիկին Լուսի Աղապապեան	300,000
Տքթ. և Տի. Ֆրանսիս և Մինէ Ուիլիքմզ	300,000
Թովմաս Էրիս	300,000
Խարրերգի Հայրենակց. Միութեան	
Տիկնանց Մարմին	300,000
Տիկին Սըրուհի Զալըգեան	278,000

Յակոբ և Արտեմիս Նազրբեան	253,000	Տէր և Տիկին ձօն և Քուին Փաշայեան	108,000
Տէր և Տիկ Թօմաս և Ժողէֆին Հարթս	225,000	Սարգիս Զէրտէիեան	100,000
Տէր և Տիկին ձօն Նորանեան	225,000	Քարլ և Իտա Վարատեան	90,000
Լէօ և Տօնեա Քիրքլանտ	220,000	Կիրակնօրեայ Վարժարան Վան Նիւսի	90,000
Լօնկ Ալլընտի Ս. Նահատակաց Վրժ.	220,000	Տարլէն և Քէթի Սէրիմեան	75,000
Մարթին և ձօյս Քինսօնեան	210,000	Պարսյր և Լիտիա Քիրամիտեան	75,000
Սաքրամենթոյի Տիկնանց Միութիւն	210,000	Օր. Արմինէ Տ. Յակոբեան	75,000
Օր. Էլիզապէթ Շամիրեան	165,000	Տէր և Տիկին ձօն Պահատուրեան	75,000
Տիկին Արմենուհի Վօլիկեան	164,000	Տէր և Տիկին Էնտրիւ Գասպար	75,000
Հոուսթ Ասլանեան	160,000	Տէր և Տիկին Ջարլզ Նէֆեան	75,000
Տիկին Լուսի Քօչեան	150,000	Տէր և Տիկին Արշաւիր Եղիսեան	75,000
Միքայէլ և Նաթալիա Մահտեսեան	150,000	ձայրլզ և Տօրթի Քարթլըր	75,000
Տքթ. Պօղոս Գարժեան	150,000	Օր. Հէլէն Հանէսեան	75,000
ձօրճ և Գոհար Հալէլըս	150,000	Եղեմի Տեարց և Տիկնանց Միութիւն	75,000
ձօն և Էլէանօր Թէյթ	150,000	A. C. Y. O. C., Եղեմ	75,000
Տքթ. Ռօպէրթ Գասպար	150,000	Կիրակնօրեայ Վարժարան, Եղեմ	75,000
Տէր և Տիկին Սուրէն Արաւամեան	150,000	Եկեղեցւոյ Երգչախումբ, Եղեմ	75,000
Եղեմի Տիկնանց Միութիւն	150,000	Լեոն Ֆրէնք Պէյլէրեան	75,000
Մի. ուն (Առաջնորդարանի միջոցաւ)	150,000	Օկրւթուս և Մարձօրի Պարպրը	75,000
Ռիչըրտ և Առլէն Պէյլէրեան	150,000	Յակոբ Տէլլաքեան	75,000
Տքթ. Ալեքս Ասատրեան	150,000	Տիկին Կիլէն Լէուիս	75,000
Ռօպրթ Հէմլըթրի Քէլլի	150,000	Տիկին Ռօզ Վարդանեան	75,000
Տէր և Տիկին Սամ Քալուսեան	150,000	Տիկին Ռօզ Զարգարեան	75,000
Սարգիս ձգնաւորեան	150,000	Արա և Արմինէ Հիտրիեան	75,000
Գլընեան Բնտանիք	150,000	Տիկին Ալիս Ք. Սլափ	75,000
Տքթ. Միքայէլ Առաքելեան	150,000	Տիկին Լօրա Քօէն	75,000
Գրիգոր և Մելինէ Գրուզեան	150,000	Օր. Ալիս Յակոբեան	75,000
Տեարց և Տիկնանց Ընկ., Օքլէնտ	150,000	Եղուարդ և Պէլթա Գաղանճեան	75,000
Պոթթընի Հայ Եկղց. Տիկնանց Միութ.	150,000	Գրիգոր Զօրթեան	75,000
Օր. Մարի Միքայէլեան	150,000	Սթիվ Զօրթեան	75,000
Տէր և Տիկին ձէյմզ ձըսթալի	150,000	ձօն Քինկ Կիրակոսեան	75,000
Տիկին Սիրվարդ Քաւուրսորեան	150,000	Յակոբ և Լիլիան Էթմէքեան	75,000
Արամ և Աննա Հինգլեան	150,000	Տիկին Ք. Մարտէլ ձօնսըն	75,000
Տէր և Տիկին ձօրճ Գալթեան	150,000	Սամուէլ Յակոբեան	75,000
Նշան Մանարեան	150,000	Տիկին Տիանա ձէպէճեան	75,000
Սուրէն և Մէրի Տանիէլզ	150,000	Տէր և Տիկ. Օշիւն և Հէլէն Գասպարեան	75,000
Տքթ. ձաքի Հէրիս	150,000	ձօրճ և Պէլթիս Մ. Գասպարեան	75,000
Տիկին Բերկրուհի Սվանեան	150,000	Նորայր և Ալիս Մատանեան	75,000
Տէր և Տիկին Պէրրի Զօրթեան	150,000	Եղուարդ և Մէրի Պտկնեան	75,000
Ռաստրի Երիտ. Տիկնանց Միութիւն	150,000	Օր. Ֆլօրէնա Շաղալեան	75,000
Տիք և Լիզա Տիւրկեան	150,000	Էրնէսթ ձ. Շարփֆ	75,000
Վանքամ և Տիանա Քէպպան	150,000	Նազարէթ և Մարգրիտ Աղարեան	75,000
ձաք Զարգեան	150,000	Տէր և Տիկին Քարլ Պարսամեան	75,000
Հէրի Աւետիս Կարապետեան	149,000	ձօն Լ. Մուշեան	75,000
Տէր և Տիկ. Հրաչ և Պէնիդա Մարգարեան	148,000	Տիկին Ֆիլիս Հոփսոմէ Մարթին	75,000
Ֆրէնք և Պէթի Սըպէքթ	145,000	Օր. Տանա Մարթինզ	75,000
Տքթ. և Տիկին ձօրճ Քիւրանեան	145,000	Տիկին Մարի Եիմլիբեան	75,000
Հայկ Ֆ. Խանճեան	140,000	Օր. Արշա Սարգիսեան	75,000
Տիկին Էլիզապէթ Սէրեան	140,000	Տիկին Ռօքսի Պարսամեան	75,000
Նոյնէն, Իր մօր մահուան առթիւ	168,000	Տէր և Տիկին Պերճ Արազ	75,000
Լէ Բոյ և Ֆէրն Գէորգեան	140,000	Արնի Աւետեան	75,000
Տիկին Մարկարիտ Բարթիլան	140,000	Լոս Անճէլըսի Ս. Յակոբ Եկեղեցւոյ	
Տէր և Տիկին Վարդան և Սօնա		Կիրակնօրեայ Վարժարան	75,000
Երանոսեան	120,000	Զարլզ Կարոյեան	70,000
Ռօժէր Սէրեան	112,000	Օր. Հէլէն Ֆարաշեան	70,000
Տիկին Էլիէրի Էթմէքեան	112,000	Օր. Տէպրա Ռօսինալ	70,000
Ֆէյրլօնի Ս. Ղևոնդ Եկղց. Երէցներ	112,000	Տիկին Ռօզ Վարդանեան	70,000
Տիկին Հայկուհի Գարակէօզեան	110,000	ձօն Վարդան Եսաբուեան	70,000

Տիկին Վիօլեթ Թովմասեան	60,000
Տիկին Մարթա Կէնտրիս	52,000
Մելքոն Սարահեան	37,000
Հէրի և Մարի Գրգրեան	30,000

Գ ա ն ա յ է ն

Տէր և Տիկ. Արտաշէս և Սոնիա Սարեան (Ս. Թարգմ. Վրժ. Ի անշարժ Հիմնա- դրամին եղած նուիրատւութ.)	9,000,000
Վեր. Տքթ. Սթանֆորտ Ռ. Լիւսի	375,000
Տէր և Տիկին Լեոն Մելքոնեան	280,000
Տէր և Տիկ. Ժողէֆ և Լէնա Գաբրիէլեան	225,000
Արտէն և Քրիսթին Տէրվիշեան	150,000
Թմամբէի Իթոն Եկեղեցի	100,000
Տիկին Կատար Մէնէշեան	100,000
Զօհրայ Գէրարեան	75,000
Տկք. Սօֆիա Գէլիկին և Գարմէն Քէթլի	60,000
Ազատուհի և Մինա Սէրեան	55,000
Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւն, Մօնթրէալ	50,000
Օր. Մերսիսէս Սարաֆեան	50,000
Ժիրայր Թիւթիւնեան	50,000
Անթուան և Անի Ճէմէշեան	27,000

Պուէնոս Այրէսէն (Արժանքին)

Էտուարտո Սէֆերեան	4,500,000
Գէորգ և Վերա Դարակէօզեան	4,450,000
Տիկին Ատրինէ Վարդպարոնեան	3,000,000
Ճօրճ և Շիրա Վարդպարոնեան	2,970,000
Քարլօս և Հիլտա Փօթիկեան	2,950,000
Էտուարտո և Կրասիէլա Սարեան	1,450,000
Տէր և Տիկին Յարութիւն Արապեան	37,500

Սան Փաւլոյէն (Պրագիլ)

Տքթ. և Տիկ. Անդրանիկ Մանիսեան	560,000
Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութիւն	124,600
Ասպետ Գառնիկ Պաղարեան	62,300
Փառէն Պաղարեան	62,300
Գրիգոր Արսլեան	62,300
Ճօղէ Սէրայտարեան	62,300
Ճօղէ Տիւշէքէնեան	62,300
Էտուարտո Մէքսիքեան	62,300
Խորէն Շամլեան	62,300
Գրիգոր Բարսեղեան	62,300
Իգնատիոս Բարսեղեան	62,300
Սարգիս Բարսեղեան	62,300
Ճօրճ Գումարեան	62,300
Կարապետ Բանջարեան	62,300
Կարապետ Փիլաֆեան	62,300
Արթին Սանսեան	62,300
Արթիւր Աւետիսեան	62,300
Խորիսէ Զօհրայ Տօնէլեան	62,300
Համբար Սարգիս Առաքելեան	62,300
Զաւէն Տ. Յարութիւնեան	62,300
Լեոն Միթարեանի յիշատակին	62,300
Գրիգոր Միքայէլեան	62,300

Մարաշի Հայրենակց. Միութիւն	62,300
Պարգև Քամահեան	62,300
Արմանտո Շամմա	62,300
Հրանդ Յարութիւնեան	62,300
Արա Պօհալեան	62,300
Տիկին Էլիզ Պօղահեան	62,300
Տիկին Լուսիա Միթարեան	62,300
Մարտիրոս Մոմենեան	62,300

Դարագասէն (Վէճէգուէլա)

Վարդգէս Երէցեան	5,680,000
Մանուկ Տիարպէքիբեան	1,600,000
Պատրիկ Այնազեան	400,000
Նուպար և Ժուան Այնազեան	400,000
Պերէ Պաղարեան	320,000
Լույս և Աննա Տօնէրթ	320,000
Կարօ Պատուշեան	160,000
Զարեհ Գրգրէսեան	160,000
Հրանդ և Այտա Տէօփէլեան	160,000
Ճօրճ Հաֆֆար	160,000
Գրիգոր Ղազարեան	160,000
Վարուժան Ղազարեան	80,000
Առաքել Ղազարեան	80,000
Ղազար Ղազարեան	80,000
Էմիլիօ Փուղա Կօմէլ	80,000
Ճօն Քէնթ	80,000
Լիլիան Լուիս	80,000
Ռ. Հ. Սալազար	80,000
Վարդգէս Երէցեան	80,000
Մալաէս Պատրոսեան	80,000
Մանուէլ Կիրակոսեան	80,000
Էլիսա Աթթիս	80,000
Օթթօ Ուրպալ	80,000

Լ ո ճ ա ո ճ է ճ

Միհրան և Աղնիւ Էստէֆեան Հիմնադրմ.	5,800,000
Արգարեան Աւանդի Խնամակալութ.	2,100,000
Երուանդ Էստէֆեան	2,240,000
Հայկ Գալուստեան	190,000
Տիկին Սուզան Քէլիքեան	150,000
Աւետիս և Յակոբ Քէլիքեան	150,000
Ստեփան Պատուշեան	140,000
Ղուկաս և Վարդուհի Գրիգորեան	100,000
Գէորգ Քիւրքեան	95,000
Յովհաննէս Քիւրքեան	95,000
Տիկին Ատդիկ Քիւրքեան	95,000
Տէր և Տիկին Յ. Արթիւն	80,000
Տէր և Տիկին Կարօ Գրիգորեան	76,000
Տէր և Տիկին Յարութիւն Մուրաֆեան	76,000
Թահմա Եղբարք	76,000
Հ. Ա. Ունեան	21,000

Ֆրանսայէն

Տէր և Տիկ. Ժան և Ատրինէ Գաբրիէլեան	105,000
Տիկին Երջանիկ Գաբրիէլեան	40,000

Լիզպոնէն

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրմ.	6,300,000
-------------------------------	-----------

Աւտոտրախայէն

Ուսեփան Բանիկեան	288,000
Արթըր և Լօրէյն Բանիկեան	200,000
Անդրանիկ Եանկոյեան	100,000
Տէր և Տիկին Խաչիկ Տիգրայիքեան	72,000
Կարօ Զէօլմէքեան	38,000

Մուսաղէմէն

Երուսաղէմի Քաղաքապետարան	4,000,000
Կրթական Նախարարութիւն	
(Երբայքէնի ուսուցման համար) 1,242,619	
Հայ Երիտասարդաց Միութիւն	425,000
Յակոբ Շէօմէլեան	300,000
Հայ Օգնութեան Միութիւն	270,000
Վարուժան Տիրատուրեան	200,000
Արգար Զաքարեան	100,000
Տիկին Եղիսարեթ Անդրէասեան	20,000

Պատուական նուիրատուներու այս ցանկէն յետոյ, այստեղ կրկնակի շնորհակալութիւններով կ'ուզենք յիշատակել աւսուցիչները այն բարերարներուն, որոնք իրենց նուիրատուութիւններով ամբողջական դասարաններ կը պահեն մեր վարժարանէն ներս, իրենց կամ իրենց գերդաստաններու անուններով:

Մեր օրդիական սիրոյն և երախտագիտութեան զգացումները Ազգիօ Վահագնի Հայրապետին՝ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. ին, որուն հայրական կարգադրութեամբ մեր կրթական գործը այս տարի ևս օգտուեցաւ Լսնտանի Արգարեան Աւանդէն 1000 Սթերլինի նպաստով մը: Շնորհակալութիւն նաև Աւանդին պատասխանատու Մարմին:

Մեր խորին երախտագիտութիւնը Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան արժանընտիր Նախագահին՝ Տէր և Տիկին Ալեքս և Մարի Մանուկեաններուն, որոնց կարգադրութեամբ Վարժարանս այս տարի ևս օգտուեցաւ Հ. Բ. Ը. Մ. — Փիթըր և Էլիզապէթ Թորոսեան Հիմնարկէն 1000 Տոլարի նպաստով մը: Առաւել Տէր և Տիկին Մանուկեաններ անձնապէս ալ այս տարի ևս օգնեցին մեր կրթական գործին, կատարելով 5000 Տոլարի յատկացում մը: Շնորհակալութիւն մեր վարժարանին ու անոր առաքելութեան նկատմամբ ցոյց տրուած իրենց վստահութեան և սիրոյն համար անցեալին և այսօր: Որեւէ ասեմ անոնց սրտին դռները մենք

փակ չգտանք մեր կարիքներուն առջև: Այս առթիւ կ'ուզենք յիշատակել նաև Հ. Բ. Ը. Միութիւնը, որ մեր խնդրանքին ընդառաջելով, ամէն տարի ուսանողական կրթութեան յատկացումներ կը կատարէ բարձրագոյն համալսարանական կրթութիւն ստացող մեր այն շրջանաւարտներուն, որոնք պէտք ունին օգնութեան: Շնորհակալութիւն իրենց:

Մեր սրտագին շնորհակալութիւնները Լիզպետի Գալուստ Կիւպէնկեան Հաստատութեան, որ անցեալ տարիներուն նման այս տարի ևս բերաւ իր աջակցութիւնը մեր կրթական գործին 4420 Ամերիկեան Տոլարի նուիրատուութեամբ:

Սրտագին շնորհակալութեան խօսք ունինք Հարաւային Ամերիկայէն Տիար Էտաւարտ Սէֆէրեանին և իր համեստփայլ քրօջ՝ Տիկին Ատրինէ Վարդպարոնեանին: Տիար Սէֆէրեան 3000 Տոլարի նուիրատուութեամբ շարունակեց պահել դասարան մը իր հանգուցեալ մօր՝ Գէթրինի յիշատակին, իսկ Տիկին Վարդպարոնեան 2000 Տոլարի նուիրատուութեամբ շարունակեց պահել դասարան մը իր հանգուցեալ մօռուսնայն՝ Գէորգի անունով:

Իսկ Տիկին Վարդպարոնեանի զաւակը՝ Կրտսերն Գէորգ Վարդպարոնեան և իր Տիկինը՝ Շիլա, հետեւելով իրենց մօր բարի օրինակին, անցեալ տարի և այս տարի մեր կրթական գործին օժանդակեցին 2000 Տոլարի նուիրատուութեամբ մը: Շնորհակալութիւն ալսիւ նուիրատուներուն:

Սէֆէրեան - Վարդպարոնեան տունը իրենց հօրեղբոր և մօր մահուան առիթով բացառիկ նուիրատուութեամբ կրթական հիմնադրամ մը հաստատեցին, որուն տոկոսային հասոյթը ժամանակի ընթացքին պիտի յատկացուի վարժարանին կրթական պէտքերուն: Այս հիմնադրամը տոկոսային յաւելումներով այսօր հասած է 23,709 Տոլարի: Երկնային հանգիստ իրենց ննջեցեալներու հօգիններուն:

Մեր խորին շնորհակալութիւնները Գանատայէն Տէր և Տիկին Արտաշէս և Սօնա Սարեաններուն, որոնք տարեկան 6000 Տոլարի յատկացումով դասարան մը կը պահեն իրենց հանգուցեալ մօր՝ Տիկին Արշալույս Զրուանգեանի յիշատակին ինչ-

պէս նաև ուրիշ դասարան մը՝ իրենց հանգուցեալ ազգականին և մեր վարժարանի նախկին բարերար Տիար Կոստանիկ Սէֆէրեանի յիշատակին: Սարեան պատուական ամուլը բացառիկ յատկացումով մը տարիներ առաջ հաստատեցին Սարեան Արտաշէս-Սօնիա Հիմնադրամը, որուն տնօրէն պիտի յատկացուի Ս. Թարգմանչաց վարժարանի կրթական պէտքերուն: Սոյն Հիմնադրամը յետագայ տարիներու յատկացումներով այժմ հասած է 26,478 Ամերիկեան Տոլարի: Երկնային հանգիստ կը հայցենք իրենց ննջեցեալներու հոգիներուն:

Իսկ իրենց շնորհալի զաւակն ու հարսը՝ Էտուարտօ և Կրասիլիա Սարեաններ իրենց զուկի մկրտութեան առիթով 1000 Տոլարի նուիրատուութիւն մը կատարեցին մեր կրթական գործին, որուն համար դարձեալ մեր սրտագին շնորհակալութիւնները շնորհալի այս զոյգին:

Շնորհակալութեան սրտագին զգացումներով կը յիշատակենք անունը Գարագասարեանկ պատուական և հայրենասէր Հայուն՝ Տիար Վարդգէս Երէցեանի, որ տարեկան 4000 Տոլարի յատկացումով մը կը պահէ մեր վարժարանի դասարաններէն մին, որ իր հանգուցեալ կնոջ անունով կը կոչուի «Էլվիր Երէցեան դասարան»: Պր. Երէցեան իր Տիկնոջ մահուան առիթով 25,000 Տոլարի բացառիկ յատկացումով մը հաստատեց «Ս. Թարգմանչաց վարժարանի Էլվիր Երէցեան Հիմնադրամ»ը, որ յետագային եղած նոր նուիրատուութիւններով և տնօրէնային յաւելումներով այսօր հասած է 43,333 Տոլարի: Մենք ու մեր աշակերտները ունին մշտական աղօթք հանգուցեալ Էլվիրի հոգեոյն ի հանգիստ:

Մեր զգածուած շնորհակալութիւնները Ամերիկահայ հայագէտ մտաւորականին՝ Սերաստացի Տէր և Տիկին Փօլ-Զարեհ Պտուկեաններուն, որոնք տարեկան 2500 Տոլարի նուիրատուութեամբ կը բարերարեն մեր Մանկապարտէզը, որ իրենց հանգուցեալ մօրաքրոջ անունով կը կոչուի «Մանիա Տ. Մեսրոպեան Մանկապարտէզ»: Հանգուցեալը եղած է Սերաստիոյ առաջին Մանկապարտիզպանունին: Երկնային հանգիստ իր հոգիին:

Երախտիքի խօսքեր ունինք Հառւրտ Գարակէօզեան Հիմնարկութեան պատուական Նախագահունի Համեստափայլ Օր. Լէյլա Գարակէօզեանին, որուն բարեհաճ կարգադրութեամբ Հիմնարկը մեր վարժարանէն ներս կը պահէ դասարան մը ի յիշատակ հանգուցեալ Հառւրտ Գարակէօզեանին: Կը յիշենք յատկապէս, որ այս տարի Հիմնարկը իր 2000 Տոլարի յատկացումը բարձրացուցած է 5000 Տոլարի, որպէս գնահատութիւն մեր ժողովուրդին Ս. Թարգմանչաց վարժարանէն ընծայուած կրթական ծառայութեան: Ոչ միայն անտեսական, այլև բարոյական քաջալերութիւն մըն է մեզ համար ազնիւ այս կեցուածքը, որուն համար կրկնակի շնորհակալ ենք ազնուափայլ Օր. Լէյլային և Հիմնարկի վարչութեան բոլոր անդամներուն:

Մեր սրտագին շնորհակալութիւնները Ամերիկահայ մեր դպրոցի պատուական բարեկամներէն Տիար Ռիչըրտ Կրէկօրին, որ այս տարի ևս շարունակեց պահել իր հանգուցեալ մօր յիշատակին դասարան մը, որ կը կոչուի «Տիկին Ալիս Գարագաշեան-Կրէկօրի դասարան»: Այս նպատակին համար Տիար Կրէկօրի այս տարի տրամագրեց 2218 Տոլար և 74 սէնթ: Կ'աղօթենք իր մօր հոգեոյն հանգստեան համար:

Մեր խորագգած շնորհակալութիւնները Ամերիկարեանկ Տէր և Տիկին Սուրէն և Վերժին Ֆէսճեաններուն, որոնք 4000 Տոլարի տարեկան նուիրատուութեամբ իրենց և իրենց զուակոց՝ Ռօպէրթի և Սիլվիայի անուններով կը պահեն դասարաններ մեր վարժարանէն ներս: Պր. Ֆէսճեան սրտագին բարեկամ մըն է Ս. Թարգմանչաց վարժարանին, որուն համար ոչ միայն այնքան պատրաստակամօրէն կը բերէ իր օժանդակութիւնը, այլև իր ընկերական շրջանակէն ներս չի խնայեր իր ֆանքն ու ճիգը նպատաստելու համար մեր կրթական գործը նաև իր շրջանակէն հասած նուիրատուութիւններով:

Իր առիթով յատկապէս յիշատակելի է նաև Երուսաղէմի Պատրիարքութեան Բարեկամներու կազմակերպութիւնը, որուն վարիչն ու գանձապահն է Տիար Սուրէն Ֆէսճեան: Յիշեալ կազմակերպու-

թիւնը ինչպէս նախանցեալ տարիներուն այս տարի ևս բերու իր շօշափելի նպատար մեր կրթական գործին, նուիրաբերելով 10.000 Տոլարի գումար մը: Այս կազմակերպութիւնը օգտակար եղաւ Վարժարանին, մեզի փոխանցելով նաև մեր կարգ մը բարերարներու նուիրատուութիւնները: Մեր կրկնակի շնորհակալութիւնները թէ՛ կազմակերպութեան և թէ՛ Տիար Սուրէն Ֆէսճեանին:

Սրտագին շնորհակալութիւններ Լոնտոնաբնակ մեր կրթատէր ազգայիններէն Տիար Երուանդ Էսսէֆեանին. որ այս տարի ևս իր անձնական միջոցներէն 1000 Սթերլինի նուիրատուութիւն մը կատարեց մեր Վարժարանին, ի յիշատակ իր հանգուցեալ եղբայրներուն՝ Կարապետի և Յակոբի: Իսկ իր կողմէ հաստատուած «Միհրան և Ազնիւ Էսսէֆեան» բարեգործական հիմնարկը կատարեց 2000 Սթերլինի նուիրատուութիւն մը: Մեր Վարժարանէն ներս ունինք դասարան մը, որ կը կոչուի «Միհրան և Ազնիւ Էսսէֆեան դասարան»: Թող Աստուած իր լոյսերուն մէջ հանգչեցնէ Կարապետի, Յակոբի, Միհրանի և Ազնիւի հոգիները:

Խորին շնորհակալութիւններ Տիար Ռոյթարնակ Տէր և Տիկին Եղուարդ և Հէլէն Մարտիկեաններուն, Հ. Բ. Ը. Միսթեան Կեդրոնական Վարչութեան պատուոյ Նախագահին, որոնք երկար տարիներէ ի վեր, տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ կը պահեն «Էստուրթ և Հէլէն Մարտիկեան Դասարան»ը, իրենց նուիրատուութեան հետ յայտնաբերելով միշտ ալ զնահատանք և սէր հանդէպ մեր մանուկներուն ու կրթական գործին:

Մեր խորազգած շնորհակալութիւնները Ամերիկահայ շնորհալի զոյգին՝ Տէր և Տիկին Էստուրթ և Սթօրմի Փանոսեաններուն, որոնք երկար տարիներէ ի վեր կը պահեն դասարան մը իրենց անուամբ, տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ, որը այս տարի բարձրացուցած էին 2500 Տոլարի, իբրև սրտառուչ արտայայտութիւն իրենց զնահատանքին հանդէպ Ս. Թարգմանչաց կրթական միսիոնին:

Սրտագին շնորհակալութեամբ և հաճոյքով կ'արձանագրենք անունները Հա-

րաւային Ամերիկայէն Տէր և Տիկին Գէորգ և Վերա Գարակէօզեաններուն, որոնք կը բարերարեն «Գէորգ և Վերա Գարակէօզեան Դասարան»ը: Անոնք անձամբ եղան Երուսաղէմ, գնահատեցին մեր կրթական աշխատանքը, ու այս տարի աչքառու յաւելում մը կատարելով իրենց նուիրատուութեան վրայ, 3000 Տոլարի գումարով մը բարերարեցին մեր կրթական գործը:

Շնորհակալութեան խօսք ունինք Ամերիկահայ խանդավառ և սիրելի զոյգին՝ Տէր և Տիկին Ռիչըրտ և Կլօրիա Մահտեսեաններուն, որոնք շարունակեցին պահել «Մահտեսեան Դասարան»ը, 1000 Տոլարի նուիրատուութեամբ, իրենց նուիրատուութեան խառնելով իրենց սրտագին խանդավառութիւնը հանդէպ Ս. Թարգմանչաց Վարժարանին:

Ջերմ շնորհակալութիւններ Ամերիկահայ Տէր և Տիկին Ճան և Ազնէս Կապրիէլին, որոնք տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ այս տարի ևս շարունակեցին բարերարել «Ճան և Ազնէս Կապրիէլ Դասարան»ը:

Մեր խորին շնորհակալութիւնները Համասերաստահայ Վերաշինաց Միսթեան Կեդրոնական Վարչութեան (Ամերիկա), որ 1000 Տոլարի տարեկան նուիրատուութեամբ այս տարի ևս շարունակեց պահել դասարան մը յանուն Սեբաստիոյ Ս. Նշան Վանքին: Կը յուսանք շուտով ստանալ իրենց նուիրատուութիւնը:

Շնորհակալութեան սրտագին զգացումներ Հարաւ. Ամերիկայէն (Պ. Այդէս) Տէր և Տիկին Քարլօս և Հիլտա Փօթիքեաններուն, որոնք այս տարի իրենց Երուսաղէմ այցելութեան առիթով եղան մեր Վարժարանէն ներս ու գնահատելով կատարուած ուսումնական պողալից աշխատանքը, 3000 Տոլարի խոստուածով յանձն առին բարերարել դասարան մը ի յիշատակ իրենց հանգուցեալ հօր՝ Միհրան Փօթիքեանի, որուն մէկ մասը արդէն իսկ ստացած ենք և շուտով կը ստանանք մնացեալը:

Ս. Թարգմանչաց Նախկին սաներէն Տէր և Տիկին Գրիգոր և Յասմիկ Մատուրեաններ, Նախկին Երուսաղէմահայեր և այժմ Ամերիկաբնակ, տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ կը պահեն

«Գրիգոր և Յամբիկ Ծատուրեան Դասարան»ը: Սրտագին շնորհակալութիւններ մեր երախտագէտ և սիրեցեալ սաներուն:

Ամերիկաբնակ Տէր և Տիկին Գրիգոր և Սոնա Ասատրեաններ, որոնք վերջերս եղան ուխտաւորաբար Երուսաղէմ, ի տես Ս. Թարգմանչաց Վարժարանի կրթական գործունէութեան, յանձն առին տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ պահել դասարան մը իրենց անունով: Զգածուած շնորհակալութիւններ պատուական և ուսումնասէր այս զոյգին:

Հարաւային Ամերիկայէն (Պ. Արքէս) Տիար Մանուկ Տիարպէրիեան տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ կը պահէ դասարան մը, Տիարպէրիեան հանգուցեալ եղբայրներու՝ Սարգիսի և Յովհաննէսի յիշատակին: Սրտագին շնորհակալութիւններ ուսումնասէր Պր. Մանուկին:

Յատկանշական պարագայ մը. — «Կոմիտաս»ին նուիրուած մեր Ամովերջի Հանդէսին ներկայ գտնուեցան Հարաւային Ամերիկայէն Տէր և Տիկին Արմէն և Նէլլի Զընթեան ուսումնասէր զոյգը: Հանդէսին ազգային ու մշակութային մթնոլորտը, մեր աշակերտներու արտասանական, երգչական, ատենախօսական շատ յաջող իրագործումները այնքան խանդավառեցին այս պատուական զոյգը, որ տեղւոյն վրայ իսկ ինքնաբեր մղումով խոստացան իրենց վերադարձին կարեւոր նուիրատուութեամբ հաստատել Ֆօնտ մը, որուն հասոյթով պիտի մատակարարուի «Արմէն և Նէլլի Զընթեան Դասարան»ը: Մեր խորագրաց շնորհակալութիւնները իրենց:

Այստեղ շնորհակալութեամբ յատկապէս կը յիշատակենք անունները այն ուսումնասէր ազգայիններուն, որոնք տարւոյս ընթացքին 500 Տոլար և անկէ վեր գումարով օժանդակած են մեր կրթական գործին: (Բաւորն ալ Ամերիկայէն): Այսպէս. —

Տքթ. և Տիկին Էմման Կօրէք նուիրաբերած են 900 Տոլար:

Նոյեմի և Անի Պէրպէրեան քոյրեր իրենց հօր՝ Յովհաննէսի մահուն առթիւ 500 Տոլար:

Ռօնալտ — Վարդան և Փաթրիշիա Արարամեան՝ 500 Տոլար:

Տիար Տիգրան Մարլեան՝ 500 Տոլար:

Օր. Քարէն Տէտէրեան՝ 500 Տոլար:

Տէր և Տիկ. Թոմաս Հարիս՝ 500 Տոլար:

Իսկ Ամերիկաբնակ Տիկին Տօլօրէս Լէյպման, ի յիշատակ իր հանգուցեալ հօր՝ նահատակ գրագէտ Գրիգոր Զօհրապի, Հ. Բ. Ը. Միութեան միջոցաւ ամէն տարի նուիրատուութիւն մը կը կատարէ, որուն համար ունինք սրտագին շնորհակալութեան պարտք:

Դարձեալ շնորհակալութեամբ կ'արձանագրենք անունները այն պատուական ազգայիններուն, որոնց իւրաքանչիւրը իր քաղաքի և իր շրջանակի կազմակերպութիւններէն և բարեսէր ազգայիններէն նուիրատուութիւններ ապահովելով մեծապէս կը նպաստեն մեր կրթական գործին: Այսպէս, Ամերիկայէն Տէր և Տիկին Ուօլթըր Գարապեան, Ազնուափայլ Տքթ. Բերկրուհի Սվաճեան, Արթ. Տ. Վարդան Քհչ. Գասպարեան, Արթ. Տ. Բարի Քհչ. Մէթճեան, Գարագուսէն՝ Տիար Պատրիկ Այնազեան, Սան Փաւլոյէն՝ Առպետ Գառնիկ Պազարեան, Պուէնոս Այրէսէն՝ Տիար Յարութիւն Արապեան:

Շնորհակալութեան սրտագին պարտք ունինք «Երատասմանի Հայերի հետ Մշակութային կապ»ի հայրենական կազմակերպութեան և անոր նորընտիր Նախագահ Տիար Կարլէն Տալլաքեանին, որոնց հայրենական հոգածութեան իբրեւ արգիւնք կանոնաւորաբար կը ստանանք Հայերէն լեզուի դասագիրքեր, զանազան հայրենական թերթեր և այլ գրական հրատարակութիւններ, շատ արժեւոր նըպաստ մը մեր կրթական գործին: Այս առթիւ մեր յարգալից զգացումներու հաւատարմութեամբ կը ներկայացնենք կազմակերպութեան նախկին Նախագահ Տիար Վարդգէս Համազասպեանին, ազնիւ բարեկամ մը մեր կրթական հաստատութեան, ու յաջողութիւն կը մղովենք նոր նշանակուած Նախագահ Տիար Տէալաքեանին, որուն ճանչցած ենք իբր պատուական, արժանաւոր և խորապէս հայրենասէր անձնաւորութիւն:

Այս առթիւ շնորհակալութիւն նաեւ «Պայքար» և «Ասպարէզ» Ամերիկահայ թերթերու խմբագրութեանց, որոնք սի-

ՏՍՐԵՎԱԼՆ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Նման նախորդ տարիներուն, այս տարի ևս Յունիսի առաջին երկու կիրակիներուն կատարուեցան Ս. Թարգմանչաց Վարժարանի Ամավերջի Հանդէսները (Մանկապարտէզի և Երկրորդական բաժնի), երկուքն ալ ժառնգ. Վարժարանի Մանուկեան սրահին մէջ և նախադաշնութեամբ Տեսուչ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի:

Առաջինին յայտագիրը կը բաղկանար արտասանութիւններէ, հայկական պարերէ և կարճ տրամախօսութիւններէ: Բացման խօսքը բրաւ ժրջան վարժուհիներէն Օր. Արփիկ Գահուէճեանը որ, իր պաշտօնակիցներուն նման, ոչինչ խնայած էր Հանդէսի յաջողութեան համար: 10 փոքրիկներ ստացան իրենց վկայականները:

Երկրորդական բաժնի Հանդէսը, ինչպէս յիշուեցաւ Տեղեկագրին մէջ, նուիրուած էր կոմիտաս Վարդապետի մահուան 50ամեակին: Բացման խօսքը բրաւ շրջանաւարտ սաներէն Ուիլիամ Ղաուի, իսկ իր դասընկերուհիներէն երկուքը խօսեցան Հայ երաժշտութեան ուրիշանի կեանքին ու գործին մասին, կարելի յաջողութեամբ: Խմբերգներն ալ, Պր. Սահակ Գալաճեանի ղեկավարութեամբ կատարուած, կը բաղկանային կոմիտասեան երգերէ: Հանդէսին ներկայ էին, բացի Հոգեւոր Հայրերէ, հրաւիրեալներու կոկիկ բաղժութիւն մը:

Գեղարուեստական բաժնի աւարտին, Տեսուչ Սրբազանը հատուածներ կարդաց իր Տարեկան Տեղեկագրէն, որմէ ետք կատարուեցաւ վկայականներու և մրցատկներու բաշխում: Շրջանաւարտներէն — թիւով չորս — մին խնամուած ուղերձ մը կարդաց: «Հրաժեշտի երգ»էն ետք Տեսուչ Սրբազանը բրաւ փակման խօսքը, դրպոցէն ներս փամբուած հայեցի ամուր ոգեկանութեան կառչած մնալու յորդոր ուղղելով ընթացաւարտներուն: Հանդէսը փակուեցաւ Ս. Աթոռոյ մաղթերով:

բայժար մեր Վարժարանին կը տրամագրեն իրենց թերթերը:

Մեր խորին շնորհակալութեան և որպիսեան սիրոյ սրտագին պարտքը կը հատուցանենք այս առթիւ Զեզի, Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր. որ իբրեւ պետը Ս. Յակոբեանց Միաբանութեան, գերազոյն տեսուչն ու հոգատարն էք Ս. Թարգմանչաց երկրորդական Վարժարանին, այս պանծալի տունին, ուրկէ ամէն տարի խումբ խումբ կ'անցնին մեր ազգին զաւակները, լեցուելով ու շնորհագրողուելով մեր ժողովուրդին ու մեր Եկեղեցւոյ սրբազան ոգեկանութեամբ, և որոնք կանչուած են ըլլալու մեր ազգային գոյութեան, մեր ազգային ու հոգեւոր կառոյցին նոր օրերու սպասաւորներն ու մշակները: Շնորհակալ ենք նաև անձնապէս, որ այսպիսի էական գործի մը տնտեսութիւնը քանի մը տասնեակ տարիներէ ի վեր վստահած էք մեր տկար ան-

ձին իբրեւ Տեսուչ այս սրբազան տունին:

Այո՛, Ս. Թարգմանչաց երկր. Վարժարանը իր արդիւնաւորութիւնը մեծապէս կը պարտի Զերդ Սրբազնութեան, վասնզի այդ արդիւնաւորութիւնը ծաղկումն է Զեր հայրական բարձր հոգատարութեան, որ մշտապէս ունեցաւ կրթական այս սուրբ գործին վերա:

Մեր Տեղեկագրին հետ Զեզ կը ներկայացնենք այստեղ 1985-86 դպրոցական տարեշրջանի շրջանաւարտ մեր չորս սաները, որպէսզի անոնց աւարտական վկայականներուն հետ շնորհէք Զեր հայրական օրհնութիւնները, որպէսզի անոնք ըլլան մեր ժողովուրդին բեղմնաւոր զաւակներն ու «մշակներ տառնց ամօթոյ»:

Ներայրական ջերմագին սիրով
խոնարհ աղօթակից

ԿԻՒՐԵՂ ԵՊՍ. ԳԱՅԻԿԵԱՆ

Տեսուչ Ս. Թ. Երկ. Վարժարանի